32

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X

MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
32

Yerevan – 2021

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
32

Ереван – 2021

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

32

Երևան – 2021

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մութաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան։

«Բանբեր Մատենադարանի» 32, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. Երևան, 2021։ 440 էջ։

Հ 31/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2021։

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմության ու բանասիրության, եկեղեցու պատմության ու երաժշտության առնչվող հոդվածներ, Հակոբ Փափազյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի (1-3 հուլիսի, 2021 թ.) նյութեր և հրապարակումներ։

ՋՈՒԼԻԵՏՏԱ ԷՅՆԱԹՅԱՆ
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՏԻԵԶԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ-ԺԳ ԴԱՐԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Տիեզերք, Արեգակ, Լուսին, մոլորակ, երկինք, երկիր, օդ ջուր, հող, հուր:*

Գիտության առաջընթացի հիմնական պայմաններից մեկը նախորդ սերունդների ստեղծածը ընդունելը և դրանց տարբեր դարերի ընթացքում կուտակված գիտելիքները համեմատելն է: Հին ժողովուրդների ստեղծած գիտելիքներն ամբողջացրին և զարգացրին հին Հունաստանի գիտնականները: Նախորդ սերունդների դիտումների արդյունքները մ.թ.ա. Դ դարում ամփոփեց հռչակավոր գիտնական Արիստոտելը: Ըստ նրա՝ երկնակամարի կենտրոնում գտնվող անշարժ երկրի շուրջը պտտվում են յոթ մոլորակները և անշարժ աստեղերը: Մ. թ. Բ դարում Պտղոմեոսը ներկայացրեց հին հունական տիեզերագիտության վերջնական և անխախտելի պատկերը: Երկրակենտրոն տիեզերքի համակարգի շարժումը բացատրվում էր երկնակամարի պտույտով երկրի շուրջը, որում մոլորակները շարժվում էին իրենց սեփական շրջանաձև պտույտներով:

«Թարգմանեալք ի Պտղոմէոսէ ոչ ի յոյնս գտեալ էր զամենայն, որպէս և յոյնք յերբայեցւոց և ի քաղդէացւոց և յեգիպտացւոց և յեթովպացւոց, քանզի առ յոյնս յուսումնականէն... յայլմանէ թարգմանեալ և ժողովեալ», — գրում է Գրիգոր Մագիստրոսը[1]:

Բնության օրենքները հայտնաբերելուց հետո միայն հնարավոր եղավ հասկանալ մինչ այդ անհասկանալի երևույթները՝ Արեգակի, Լուսնի խավարումները: Մարդիկ դադարեցին դրանց հանդեպ անբացատրելի վախ զգալ, հասկացան, որ երկնային մարմինները նման չեն երկրագնդին, և որ ամեն ինչ անընդհատ փոփոխվում է: Աշխարհի կառուցվածքի պատկերացումները զարգացել են փիլիսոփայության և աստվածաբանության միահյուսման տեսության սահմաններում: «Բնական գիտելիքների ուսումնասիրությունը դիտվում էր իբրև միջոց, որը հիմնավորում էր կրոնական դոգմաները, օգնում հասնել ճշմարտությանը և

[1] **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք եւ չափաբերականք*, ՄՀ, ճ. ԺԻ, Ջ-ԺԱ դար, Երևան, 2013, էջ 349:

քրիստոնեական մտավոր ինքնակատարելագործմանը»[2]: Միջնադարում եկեղեցին պահպանում էր ժամանակի գիտական կրթության մենաշնորհը: Եվրոպայում մեծ մտածողները աստվածաբաններ էին, որոնք ԺԲ դարից ի վեր սկսել էին թարգմանել և տարածել հին հույների աշխատությունները: Թարգմանիչները նաև մեկնիչներ էին, նրանք կազմում էին դասագրքեր՝ նյութը ներկայացնելով պարզ, հասկանալի եղանակով: Դրանց շնորհիվ զարգանում էր ինքնուրույն գիտական միտքը:

Հայկական ձեռագրերը հարուստ են բնագիտական բովանդակությամբ նյութերով: Վաղ միջնադարի թարգմանական գրականությունը վկայում է ե-ԺԳ դդ. գիտական հարցերի հանդեպ հետաքրքրության մասին: Ստեղծված թարգմանությունները և մեկնությունները «զինելու էին մտավորականությանը ազգային շահերի համար մղվող գոտեմարտում»[3], — գրում է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը: Իմաստասեր մեկնիչները կուրորեն չէին կրկնում նախկինների մտքերը, այլ զարգացնում դրանք, երբեմն հակառակ տեսակետներ հայտնում:

Այսպես, ըստ Եզնիկի՝ երկինքը չի շարժվում, քանի որ ցերեկն էլ պայծառ աստղերը կարելի է դիտել նույն տեղում. «Եւ ոչ երկինք շրջին, զորմէ ասեն արտաքին իմաստունքն, թե մերթ ի շրջելն ծածկեն զլուսաւորսն և մերթ յայտնեն: Եւ եթէ զամենայն աւր շրջիցին, զիա՞րդ է զարեգակն աւուր աւուր ի նոյն արեւելս ածիցեն և զլուսին՝ յամսեան հազիւ ի նոյն տեղիս»[4]: Իսկ ըստ Անանիա Շիրակացու՝ «անչափ է արագութիւն երկնից»[5]: Գիտությամբ զբաղվող մարդը պետք է լիներ կրթյալ, նախորդների աշխատանքներին լավատեղյակ, որը նախ ուսումնասիրել է Հին և Նոր կտակարանները, քանզի «յամենայնի իմաստասէրն խոստովանեալ լիցի զգիտութիւն և ուրացեալ զանգիտութիւն»[6]:

Է դարում Ա. Շիրակացին ընթերցողին ծանոթացնում է իր ժամանակի գրեթե բոլոր գիտական հայացքների հետ, ներկայացնելով իր վերաբերմունքը դրանց նկատմամբ: Նա համոզված է, որ Արեգակը չափերով մի քանի անգամ գերազանցում է թե՛ երկրին, թե՛ Լուսնին և թե՛ աստղերին[7]:

Իսկ ե դարում Եզնիկը դեմ էր քրիստոնեական գաղափարախոսությանը հակառակ բոլոր ուսմունքներին: տեղյակ լինելով ժամանակի գիտական տեսակետներին, նա պնդում է. «զերկինս բանիւ հաստատեաց ի վերայ ոչընչի, նոյն և

---

[2] **Г. Самодурова**, "Школы и образование", в кн. *Культура Византии VII-XII вв.*, Москва. 1989, с. 370.

[3] **Լ. Խաչիկյան**, *Եղիշեի «Արարածոց մեկնությունը»*, Երևան, 1992, էջ 163:

[4] **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց*, ՄՀ, հ. Ա, ե դար, Լիբանան, 2003, էջ 482:

[5] **Անանիա Շիրակացի**, *Տիեզերագիտություն և տոմար*, աշխատասիրությամբ **Ա. Աբրահամյանի**, Երևան, 1940, էջ 48:

[6] **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք եւ չափաբերականք*, էջ 241:

[7] **Анания Ширакаци**, *Космография*, перевод с древнеармянского, предисловие ***К. Тер-Давтян, С. С. Аревшатян***, 1962, с. 33.

զերկիր կացոյց ի վերայ ոչընչի, եւ նորին հրամանն ունի եւ զերկոսին անշարժս եւ զետեղակալս»[8]*: Ըստ նրա՝ Արարչագործությունը Աստուծո գաղափարի հետ նույնացնելու մեջ որևէ հակասություն չկա: Այսպես, «եթէ Դաւիթ ասէ, եթէ ի վերայ ջուրց է երկիր, եւ Յովբաւ, եսայեաւ ի վերայ ոչնչի կայ, ոչ ինչ է ընդ այն զարմանալ եւ ոչ մարգարէութիւնն հակառակ միմեանց համարել, քանզի ե՛ւ այն ճշմարիտ է, ե՛ւ այս հաստատուն»*[9]*: Եզրակացությունը մեկն է՝ «Առաւել Յունաց իմաստունքն, զի հասեալ ի վերայ իմաստութեանն՝ չծանեան իմաստութեամբն զԱրարիչն»*[10]*: Նույնը վերաբերում է նույնիսկ Պյութագորասին, որևէ «գլուխ փիլիսոփայիցն նոցա»*[11]*:*

Նույն իմաստունները «թողեալ զպատճառն՝ պատճառաւորացն պաշտաւն մատուցանիցեն, որպէս երանելի Առաքեալն ասէ, թէ՝ սպասաւորեցան և պաշտեցին զարարածս եւ ոչ զԱրարիչն»[12]*: Բանն այն է, որ «որպէս ստուեր իրիք ոչ երբեք հեռանայ յիմեքէն, նոյնպէս եւ ոչ աշխարհս՝ երբեք զատ յԱստուծոյ»*[13]*: Իրականում գիտությունը դիտվում էր իբրև միջոց, որը հիմնավորում էր կրոնական մտածելակերպը:*

Մ. Աբեղյանը գրում է. «Եզնիկը օգտվել է երբեմն բառացի հունական աղբյուրներից՝ հատկապես Պիթագորյան... Պղատոնյան ուսմունքներից, տիեզերքի ծագման և նրանց բարոյական սկզբունքների վերաբերյալ... Մերժելով... բազմաստվածությունը, նա իբրև ելակետ ընդունում է միայն մեկ սկիզբ... Այդ էությունը... գոյություն ունի բնությունից առաջ և աշխարհի ու ամեն բանի արարիչն է: Նա իր տեսությունը կազմում է սովորաբար Սուրբ Գրքի խոսքերի մեկնությամբ ընդդեմ արտաքին իմաստունների... Նրան ծանոթ են ժամանակի գիտական տեսությունները Լուսնի, Արեգակի և մոլորակների շարժման մասին, բայց նա չի ընդունում դրանք... Շատ պարզ երևում է, որ նա աստվածաբանական-մեկնաբանական դպրոցի ուսում է ստացել, ուստի և նրա դատողությունները տիեզերքի մասին ելնում են իր դպրոցից»[14]*:*

Ըստ Եղիշէի՝ մոլորակները, ինչպես նաև անմոլար աստղերը չունեն սեփական լույս՝ այն ստանում են հրային կամարից, որը հայկական ձեռագրերում կոչվում է Արփի[15]*: Հայտնի է, որ Պյութագորասի աշակերտներից Փիլոլայոսը համարում էր, որ երկիրը, Արեգակը, Լուսինը և հինգ մոլորակները պտտվում են կենտրոնական կրակի շուրջը:*

---

8 **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց*, էջ 483:
9 Նույն տեղում, էջ 485:
10 Նույն տեղում, էջ 486:
11 Նույն տեղում, էջ 491:
12 Նույն տեղում, էջ 490, 491:
13 Նույն տեղում, էջ 492:
14 **Մ. Աբեղյան**, *Հայոց հին գրականության պատմություն*, Գիրք I, Երևան, 1944, էջ 131-132:
15 *Եղիշէի «Արարածոց մեկնությունը»*, էջ 180:

ԺԱ դարի արաբ գիտնական Բիրունին հայտնում է, որ ըստ գիտնականների՝ ինչպես մոլորակների շարժումները կապված են Արեգակի հետ, այդպես էլ լուսավորվում են նրա շնորհիվ: Սակայն «Ուրիշները պնդում են, որ լուսավոր են բոլոր լուսատուները բացի Լուսնից... դա ավելի մոտ է ճշմարտությանը»[16]:

Պետք է նշել, որ հետևելով նախորդների տեսություններին, մեր մտածողները երբեմն հակադրվել են դրանց: Այսպես, Անանիա Շիրակացին հայտնում է, որ որոշ եկեղեցական հայրերի կարծիքով Արեգակի լույսը ոչ թե Արփիից է, այլ արարչության երեք օրերի ցրված լույսն է, որ հավաքվել է Արեգակի ամանում: Իրոք, այդպիսի կարծիքի են եղել Բարսեղ Կեսարացին[17]*, Եփրեմ Ասորին: Ընդ որում, ըստ վերջինի՝ նույն լույսն է նաև լուսինը. «Այն լոյսն, որ յառաջ էր, քան զարեգակն երեքօրեայ ժամանակաւ, ոչ էր ամփոփ եւ ժողով, այլ տարած և սփիւռ էր»: Ըստ այմ՝ չորրորդ օրը արեգակը և լուսինը ստեղծվեցին, լույսը ամփոփվեց նրանց մեջ*[18]: *ԺԳ դարում նույնպիսի կարծիք ուներ նաև Հովհաննես Երզնկացին*[19]:

Անանիա Շիրակացին ընդունում է Արփիի վարկածը: Ըստ նրա՝ «Արեգակը ցուրտ է բնութեամբ, զջերմութիւն և զլուսաւորութիւն յԱրփւոյ առեալ հեղու յօդս, որով լուսաւորի եւ ջեռնա երկիր... որպէս առաջնոցն հաճոյ թուեցաւ ասել»[20]:

Լույսի և ջերմության աղբյուրի մասին Շիրակացին գրում է. «Թողում զչար փիլիսոփայիցն ճառս, որ ասեն թէ ի շփելոյ երագ ընթացիցն իւրոյ առնու ջերմութիւն եւ օդոյս բերեալ տարածէ զաշխարհաս: Բայց իմաստուն խորհողաց յայտնի է, թէ յԱրփւոյ է եւ լոյսն և ջերմութիւն, որպէս առաջնոցն հաճոյ թուեցաւ ասել»[21]:

ԺԱ դարում Գր. Մագիստրոսը դիմելով աշակերտին, զգուշացնում է, որ նախ պետք է լինել կրթյալ, իմանալ գիտության պատմությունը, հետո միայն զբաղվել բնագիտական հարցերով. «Այլ լուայ, եթէ Աստուծոյ փոխանդ մեր տուեալ է ձեզ Արիստոստէլ... նախ պարտ է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս... ապա զՍահմանացն պարունակել, եւ պղատոնական եւ արիստոտէլական, եւ դարձեալ պիւթագորական... բացորոշմանց եւ դատողութեանց, նախուստ քան զայսոսիկ կրթեցելովք ներկուռ վերածնութեամբ զՀին և զՆոր Կտակարանս... Զի յամենայնի իմաստասէրն խոստովանեալ լիցի զգիտութիւն եւ ուրացեալ զանգիտութիւն... Արիստոտէլի հաւաքմունքդ

---

16 **Бируни Абу Рейхан**, *Избранные произведения*, т. 6, Ташкент, 1963, с. 65.

17 **Բարսեղ Կեսարացի**, *Յաղագս վեցօրեայ արարչութեան*, աշխատասիրությամբ *Կ. Մուրադյանի*, Երևան, 1984, էջ 172:

18 *Սրբոյն Եփրեմի մատենագրությունք*, հ. I, Վենետիկ, 1836, էջ 5:

19 **Յովհաննէս Երզնկացի**, *Ի վերայ երկնային զարդուց*, Կալկաթա, 1846, էջ 35:

20 *Տիեզերագիտություն և տոմար*, էջ 47-48:

21 Նույն տեղում, էջ 48:

այն է, որ ասացեալն է յաղագս երկնային մարմնոյն և գնդատեսութեան երկրի... առաքեա այսր զդա»[22]:

Թ դարում արաբները թարգմանեցին Պտղոմէոսի Ալմագեստը: ԺԲ դարում եվրոպայի վանական որոշ դպրոցներ վերաճեցին համալսարանների: եկեղեցին ի դեմս հոգևորականների «պահպանում էր ժամանակի գիտական կրթվածության մենաշնորհը»[23]: *«Պտղոմեոսի տեսությունը պարունակող ձեռագրերը ընդօրինակվում էին X-XII դարերում»*[24]:

Միջնադարյան իմաստունները ընդունում էին, որ արարչագործությունից հետո բնությունը հանդես է եկել իբրև ինքնուրույն ստեղծագործող, իր հիմքում ունենալով չորս տարրերը՝ հող, ջուր, օդ և հուր. «Զորս նիւթ արար Աստուած ի պէտս շինութեան աշխարհի՝ հուր և հողմ, ջուր և հող: Սոքա ըսկզբունք և արմատք են ամենայն գոյիցս և են հակառակ միմեանց... Եւ այս է, զոր ասէ մեծ մարգարէն Մովսէս. «ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր, զի երկինքն երկու իրք է՝ հուր և օդ, և երկիրս երկու իրք է՝ հող և ջուր», — գրում է Հովհաննես Երզնկացին ԺԳ դարում[25]:

«Այս հայեցակետը իր սկիզբն է առել հայ ինքնուրույն գրականության արշալույսին գրված «Հաճախապատում» ճառերից, եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ից, իսկ այնուհետև այն ավելի հիմնավոր կերպով ձևակերպել է Անանիա Շիրակացին, հետագայում փոխանցելով Հովհաննես Երզնկացուն»[26]:

ԺԳ դարի նշանավոր մատենագիր Հովհաննես Երզնկացին հայտնի է փիլիսոփայական և գիտական աշխատանքներով: ԺԳ դ. երկրորդ կեսից նա ոչ միայն քարոզել, այլև հեղինակել է հայ եկեղեցու կանոններ: Շրջագայելով հարևան երկրներում, բուն Հայաստանի տարբեր շրջաններում, հանդես է եկել տարբեր բնույթի զեկուցումներով, ծավալել հասարակական գործունեության: Նա «հանդիսացել է Հայաստանում իր ժամանակաշրջանի բնագիտական մտքի կրողներից, նրա առաջավոր և ակնառու ներկայացուցիչներից մեկը»[27]: *Նրա կարծիքով անգիտությունը խավար է, Տիրոջ պատվիրանները մտքի լույս են. «Անգիտութեաննն խաւար, յորմէ ծնանի մեղք եւ անհաւատութիւն... Զոր օրինակ, արեգակն լոյս է զգալի աչաց, եւ պատուիրանք Տեառն լոյս են մտաց իմանալի աչաց: Եւ զոր աւրինակ, մարմնոյ աչք եւ լոյս արեգականն յորժամ ընդ միմեանս բա-*

---

[22] **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք եւ չափաբերականք*, էջ 240-241:

[23] **Дж. Берри**, *Наука в истории общества*, Москва, 1956, сс. 174-176.

[24] **Г. Е. Самодурова**, նշվ. աշխ., էջ 370:

[25] **Յովհաննէս Երզնկացի**, *Յաղագս երկնային շարժմանն*, աշխատասիրությամբ ***Լուսիկ Մաթևոսյանի***, Երևան, 2001, էջ 63, 64:

[26] **С. С. Аревшатян**, *Формирование философской науки в древней Армении V-VI вв.*, Ереван, с. 59.

[27] **Գ. Գրիգորյան**, *Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները*, Երևան, 1962, էջ 54:

ղակցին, ապա զմեզ զգալի լույս ընդունակ առնէ, եւ չիք հնար միոյն առանց միոյն ներգործել»[28]*:*

Երզնկացին համեմատում է հունական բնական միտքը Քրիստոսի բնախոսության հետ. «Եթե տաղքն հոմերական... իմաստն Սոկրատայ... եւ Ստագիրացույն Արիստոտէլի՝ Ստորոգութիւնք... բնախօսութիւն և հնգեակ ներածութիւնք Պորփիւրի... եւ քառեակն Պիթագորի... ապա քանի եւ առաւել զքրիստոսաշարժ լեզուին Պաւղոսի, որ զմիտս Քրիստոսի ունելով բարբառէր զբանախաւսութիւնն մերոյ ստեղծմանս, լիապէս իմաստիւք ուսանիմք ի նմանէ»[29]*: Նա նշում է, որ իրեն խնդրել են խոսել բնագիտական հարցերի շուրջ, ինչը չի մերժել. «Ըստ որում և ես նուաստ Յօհաննէս Երզնկայեցի... սպասաւոր Սուրբ Գրոց բանի ի թուին ՉԼԹ (1284) ... խնդրեաց ի մենջ յաղագս երկնի և նորին շարժմանն, յոր հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր... Որ և շարժեալ ի սիրոյ և յասոյ խնդրողաց... և իմաստախոհ արանց պարզեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք վասն դիւրաւ հասկանալի լինելոյ ընթերցողաց*[30]*: Նա կարծում է, որ գիտությամբ հետաքրքրվող բանասեր և աշխատասեր մարդիկ՝ բանի սպասավորները, պետք է օգտվեն իմաստի անսահման ծովից և հոսող գետից՝ առանց ծուլութեան*[31]*:*

Ջորս տարրերից նա առանձնացնում է հողը.

«Յանմահ բանէն արարչական, որով ստեղծան
Նոյն Աւարիչն հրաշագործեաց զարմանազան...
Ի ստորին կոյս՝ կայացեալ հող ծանրական»[32].

Ամենավերին երկնքի մասին խոսելիս հիշում է հույների և քաղդեացիների մասին. «Առաջին երկինն ասեմ զվերնական...

«Զոր և եթեր զսա կարդացին ազգն Յունական
Եւ հուր թաղկեալ այնք, որ լեզուաւ բաղդէական»[33]:

«Ջորս էլեմենտները տարբերվում են միմյանցից և չնայած այն բանին, որ միավորված տարրերի իրարամերժ հատկանիշների միջև մշտական պայքար է տեղի ունենում, բայց և այնպես այդ հատկանիշները գտնվում են մի որոշ հավասարակշռության մեջ, որը հիմնական պայման է կոնկրետ առարկայի տվյալ վիճակի պահպանման»[34]*:*

---

28 **Յովհաննես Երզնկացի**, *Մատենագրութիւն*, կազմեց *Լ. Բաղդասարյան*, Երևան, 2013, էջ 112:
29 Նույն տեղում, էջ 125:
30 **Յովհաննէս Երզնկացի**, *Յաղագս երկնային շարժման*, էջ 61, 62:
31 Նույն տեղում:
32 *Յովհաննու վարդապետի Երզնկայեցւոյ Ջարդք երկնից առ Ապլոց իշխան*, Կալկաթա, 1846, էջ 6:
33 Նույն տեղում, էջ 12, 13:
34 **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 54:

«Եւ այս է, զոր ասէ մեծ մարգարէն Մովսէս՝ Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր: Զի երկինքն երկու իրք է՝ հուր և օդ, և երկիրս երկու իրք է՝ հող և ջուր... Երկրորդ երկինք հաստատութիւնն է, զոր արար Աստուած յերկրորդ աւուր... Զի ասաց Աստուած՝ Եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ... Զի ջուրն զերեսս երկրի ծածկեալ ունէր... և վերացոյց զկէս ջրոյն ի վէր կամարաձև որպէս խորան, և այսպէս օդն և ջուրն... կոչեցաւ հաստատութիւն: Եւ է այս երկրորդ երկինք ի յօդոյ և ի ջրոյ ի ներքոյ առաջին և վերին երկնիցն, որ է հրեղէն»[35]*:*

Եզնիկը չէր համարում, թե ջուրը պատում է երկիրը, «Այլ ընդ երկրի են ջուրք և ի վերայ են ջուրք, ջուր-երկիր խառն է», ընդ որում ջրային կենդանիները նույնպես չորս տարրերից են կազմված[36]*: Իսկ Հովհաննես Երզնկացին գրում է. «Աղի են ջուրք ծովու, զի ջերմութիւն Արեգականն ծծէ և քաղէ զքաղցրն և զյստակն և զանուշ ջուրն և յօդդ հանէ... Եւ վասն այն միակշիռ մնան ջուրք ծովու, զի զոր մտանելով գետոցն յաւելու, զայլն ծծէ Արեգակն... Ոչ յաւելուն և ոչ պակասին ջուրք ծովուն, զի ի վերայ երեսաց երկրի մտանեն գետք ի ծովն, այն ի ներքոյ երկրի երակօք քամին»*[37]*: Ջրի՝ վերևում մնալու հանգամանքը նա բացատրում է այսպես. «Եւ թէ անհաւատալի թուի քեզ, թէ որպէս ջուրն դադարի ի վերոյ օդոյն և ի շուրջ գալն որպէս ի վայր ոչ հոսի, քեզ օրինակ... զամպն տես, զի ամպն ի ծովէ և ի գետոց առնու զջուրն... և ածէ անձրև ի վերայ երկրի»*[38]*:*

Արիստոտելի մոտ ջրի մասին կարդում ենք. «Մենք չենք կարող դիտարկել ջուրը որպես առանձին նյութ, այն չի կարող առանձին դիտարկվել երկրագնդի շուրջը եղած ծովից, գետերից, երկրի ընդերքում եղած ջրերից... օդն ու ջուրն են շրջապատում երկիրը: Երկրի կողմից կլանվող գետերը ցույց են տալիս, որ նրա ընդերքում շատ են դատարկություններն և անդունդները... Հունաստանում այս դեպքերը աննշան են, բայց Կովկասի ստորոտում կա լիճ, որին տեղացիները ծով են անվանում»[39]*:*

Երկնքի յոթ շրջաններում պտտվում են մոլորակները. «Երկինս, որ ի յօդս, է, բաժանի ի յոթ, եօթն մոլորակացն կոչի և ուխտ Մոլորագունդ անուանի... Եւ այս են մոլորականք ի վերուստ ի վայր... Զոհալ, Մուշթարի, Մառեխ, Շեմս, Զօհ-

---

[35] **Հովհաննես Երզնկացի**, *Յաղագս երկնային շարժմանն*, էջ 65:

[36] **Եզնիկ**, Մատենագիրք Հայոց, Ա, էջ 491:

[37] **Հովհաննես Երզնկացի**, *Յաղագս երկնային շարժմանն*, էջ 71, 72:

[38] Նույն տեղում, էջ 66:

[39] **Аристотель**, *Сочинения в четырех томах*, том 3, Москва, 1981. Գետերի անուններով շարունակում նա հիշատակում է նաև Արաքսը (նույն տեղում, էջ 468): Լճերի մասին տեղեկության հետ կապված Արիստոտելի այդ հատորի խմբագիր Ի. Դ. Ռոժանսկին գրում է, որ Կովկասի ստորոտում գտնվող լիճը ամենայն հավանականությամբ Վանա լիճն է (նույն տեղում, էջ 588, 589):

րէ, Օտարիտ, Ղամէր: Այս՝ տաճիկ լեզու անուանք են: Իսկ հայ լեզու՝ երևակ, Լուսնթագ, Հրատ, Արեգակն, Լուսաբեր, Փայլածու, Լուսին: Ի վերայ քան զամենայն է Ջոհալն և ի ներքոյ ամենայնի է Լուսինն»[40]*: Լուսնի մասին խոսելիս երգնկացին վստահություն է հայտնում, որ այն սեփական լույս ունի.*

«Սա Սելինոս՝ անուն կոչի ըստ Յունական,
Այլ և Ղամար՝ նա անուանի ըստ Տաճկական,
Իսկ մեք՝ Լուսին ասեմք սմա ըստ Հայկական...
Վասն զի՝ լոյս ունի նա յինքն իւր սեփական...
Ջի նա տեղեաւ մերձ է յերկիրս և մօտական:
Ուստի յաւուրս երկուս և կէս ի յընթացման
Ջկենդանակերպըն կատարէ և զաստիճան...
Ի բսան և ինն օր և կիսոյն՝ աւարտական,
Դարձեալ նորէ զիւր հնութիւնըն մանկական,
Բայց զսմանէ՝ ասեն ոմանք արբ գիտնական.
Թէ ոչ ունի լոյս յինքեանէ իւր բընական,
Այլ հայելի՝ ընդդէմ կացեալ արեգական,
Եւ ի նմանէ ճառագայթէ զլոյսն իւրական
Այլ մեք ասեմք՝ ըստ սուրբ գրոց ճշմարտական,
Թէ լոյս լուսնին՝ է՛ յինքեանէ արարչական:
Ջի թէ ճճի մի փոքրագոյն և սողնական
Ունի լուսիկ՝ տպաւորեալ ի յիւր տըտան,
Որով զգիրս իսկ ընթեռնուն՝ ի ժամ մըթան.
Ի կարգ գրոյն՝ զնա տանելով ի տողական:
Ապա ոչ է զարմանք ասել զայս մեզ ըզբան,
Եթէ ըզլոյս՝ լուսինն ունի ըզբընական:
Իսկ որ նշան և գիծ ի նմա է դրոշմական
Այն շուք երկրիս է և ծովու որք կերպանան»[41]:

Հովհաննես երգնկացին խոսում է նաև մակընթացությունների և տեղատվությունների մասին, որոնք պայմանավորված են Լուսնի շարժումներով.

«Ջի ի յաճման նորին՝ աճեն և լիանան,
Եւ ի մաշելըն լուծանին և թուլանան
Ջնոյն և ջուրըս տեսանես առ ծովական
Որք լիանան և թերանան ընդմին ընդման»[42]:

---

[40] **Հովհաննես Երզնկացի**, *Յաղագս երկնային շարժմանն*, էջ 72:

[41] *Յովհաննու վարդապետի Երզնկայեցւոյ Զարդք երկնից առ Ապլոյ իշխան*, Կալկաթա, 1846, էջ 22-24:

[42] *Յովհաննու վարդապետի Երզնկայեցւոյ Զարդք երկնից առ Ապլոյ իշխան*, էջ 26-27:

Լուսնի ընթացքին ուշադիր հետևողի զարմանք է առ այն, որ նրա լուսավորությունն ավելանում է Արեգակից հեռանալու դեպքում և պակասում՝ նրան մոտենալիս:

«Բայց զարմանամ ես՝ ընդ լուսնին եղեալ սահման,
Որ միշտ աճմամբ և ճնութեամբ փոփոխական,
Չի օդական նիւթ ամանոյ է երկբեռան,
Որպէս պատեանք գաղտակուրի ըզկարծրական:
Յորժամ երթայ լուսինն մերձ արեգական,
Նուազութիւն լինի լուսնոյն ունակական:
Չի զբոլորակ լուսնոյն՝ ունի վերոյ կողման,
Եւ այն՝ ընդդէմ արեգական ի հայեցման,
Իսկ զատանել՝ նըմին ի բաց հեռացական,
Յայնժամ լնու լոյսըն լուսնին և մեծանան...
Չի կէս գընտին՝ լուսով լինի այնըմ կողման,
Որ ի լուսոյ արեգականըն մերձենան...[43]
Իսկ ըզպատճառ՝ սորին լինել խաւարական,
Որ պատահի՛ այնմ ինչ աւուց ճնգետասան:
Յորժամ [կ]շիռ՝ միմեանց լինին հանդիպական
Որ առ վերնաւն տըրամագիծն և ներքինական:
Յորժամ վեցիւք կենդանակօրն՝ են հեռաստան,
Հարիւր ութսուն աստիճանօք՝ են բացական,
Սովորական լուսոյն ձգումն՝ հիւսիսական,
Որ ի ծագման լուսոյն լինի արեգական»[44]:

Իսկ Արեգակի մասին գրում է.

«Ոմանք բնութեամբ՝ ասեն սմա յոյժ ցըրտական
Եւ ի յարփոյն առեալ ըզլոյսն՝ ըզջերմական...
Բայց հաւանիմ ես սուրբ գրոց՝ Աստուածաբան...
Չի առաջին՝ լոյսն որ անեղ, արարչական
Երկրորդ արար լոյս գեղեցիկ և եղական
Եւ ի լուսոյն երրորդ աւուրըն ցիր և ցան,
Առկեալ անօթ՝ լուսաւորացըդ զանազան»[45]:
«Եւ զհրաշատ լոյսն պայծառ և պարզական,
Առկեալ անօթն լուսատու արևական...»[46]:

---

43 Նույն տեղում, էջ 27-28:
44 Նույն տեղում, էջ 29:
45 Նույն տեղում, էջ 34-35:
46 Նույն տեղում, էջ 35:

Մյուս մոլորակները՝ ըստ Երզնկացու, գտնվում են արեգակից վերև և ներքև.

«Մոլորակաց թիւ և անուն, որ ասացան,
էն ի վերոյ և ի ներոյ արեգական:
այն, որ ի բարձր և գերազանց երկինըն կան,
Նոքա յերկար ամաց սաստիկ ազդեն նշան»[47]:

Հովհաննես Երզնկացին կարծում է, որ «Ամենայն ոք, որ զբան... գրով... կամիցի դրոշմել, պարտի և զնորին պատճառն յանդիման կացուցանել, որպէս զի մարդկան յօժարութիւն և սէր խնդրողի բանին... մի ծածկեսցի ի բանասիրաց և աշխատասէր անձանց»[48]*: Պետք է նշել, թե ինչպես էին հայ իմաստասերները կարևորում գիտական և կրոնական հարցերին անդրադառնալիս սեփական անձի մասին խոսելուց ձեռնպահ մնալը. «Իսկ որպէս տեսանեմք ձևանալ զբազումս առ ախտի փառամոլութեան զգիտնոց ունել, առ որս դիմաբանել ժամանակ ոչ է»*[49]*:*

JULIETTA EINATYAN

COSMOGRAPHY IN ARMENIA IN THE 5TH-13TH CENTURIES

Key words: Universe, sun, moon, planet, sky, earth, air, water, soil, fire.

Armenian manuscripts are rich in materials concerning natural science. The translations from Greek and Syriac helped to create an educated generation who studied and commented on subjects related to cosmography. Translators were also commentators who made textbooks containing easily understandable material which contributed to the development of independent scientific thought. According to the 11th century philosopher and politician Grigor Magistros, the person who studies natural sciences must be educated and must know science history. In the 5th-13th centuries, natural sciences were studied by Eznik Koghbats'i, Eghishe, Anania Shirakats'i, and Hovhannes Erznkats'i.

---

47 **Ա. Աբրահամյան**, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, Երևան, 1956, էջ 256:
48 Նույն տեղում, էջ 61:
49 Նույն տեղում, էջ 256:

ДЖУЛЬЕТТА ЭЙНАТЯН

ЗНАНИЯ О ВСЕЛЕННОЙ В АРМЕНИИ С V ПО XIII ВЕКА

Ключевые слова: Космос, солнце, луна, планета, небо, земля, воздух, вода, земля, огонь.

В армянских рукописях сохранилось большое количество естественнонаучных текстов. Переводы с греческого и сирийского языков способствовали формированию образованного поколения, которое изучало и толковало знания о вселенной. Переводчики были одновременно и толкователями, они составляли учебники, в которых подавали материал в простой и понятной форме. Благодаря этим учебникам развивалась самостоятельная научная мысль. С V по XIII века этой областью наук занимались Езник Кохбаци, Егише, Анания Ширакаци, Ованес Ерзнкаци. Согласно философу и политическому деятелю XI века Григору Магистросу, человек, занимающийся естественными науками, должен быть образован и знать историю научной мысли.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Առտակ Մաղալյան
Ղարաբաղի խանության և Օսմանյան կայսրության
առնչությունների պատմությունից 5

Գեորգի Միրզաբեկյան
Դարաշամբի 1590 թ. օսմանյան հարկացուցակը 27

Արամ Թոփչյան
Հունա-հռոմեական հատուկ անունները Մխիթարյանների հայերեն
թարգմանություններում և դրանց տառադարձման նոր սկզբունքները 38

Գոռ Երանյան
Ամիդը Տիգրանակերտ կոչելու հայկական ավանդույթը 52

Ջուլիետտա Էյնաթյան
Տիեզերքի մասին գիտելիքները Հայաստանում Ե-ԺԹ դարերում 67

Գայանե Թերզյան
Գրիգոր Մարաշեցու մատենագրական վաստակը (Ընդհանուր ակնարկ) 78

Գևորգ Ստեփանյան
Ճալեթի վանքը պատմության բառուղիներում 92

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նարինե Վարդանյան
Հայոց կանոնական ժողովածուն մատենագրական աղբյուրներում
և հիշատակարաններում 145

Մանե Ղևոնդյան
Մխիթար Սեբաստացու «Քրիստոնէականներ»-ը որպես
կրթադաստիարակչական դասագրքի նմուշ 158

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աստղիկ Մուշեղյան
Հոգևոր տաղերգության նմուշների Կոմիտասյան գրառումները 171

ՊՐՈՖ. ՀԱԿՈԲ ՓԱՓԱԶՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ-ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՅԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Վահան Տեր-Ղևոնդյան
Բացման խոսք 195

Հասմիկ Կիրակոսյան
«Ազդարար»-ում տպագրված հայատառ պարսկերեն մի գրության մասին 198

Քրիստինե Կոստիկյան
Ագուլիսի ԺԸ. դարի հայ վաճառական խոջա Հովհաննեսի
փաստաթղթերը Մատենադարանի կաթողիկոսական դիվանում 211

Առսեն Հարությունյան
Սովի վկայությունները ԺԷ. դարասկզբի հայ մատենագրության մեջ 224

Անահիտ Թովմասյան
Թուղրան որպես օսմանյան սուլթանների ինքնիշխանության խորհրդանիշ 234

Աննա Օնանյան
Մշո Սուրբ Կարապետ վանքին նվիրաբերված սկիհի
ծածկոցների պատկերագրությունը 247

Ժիլբերտ Մեշխանբարյանս
Սեֆյան դարաշրջանի սկզբնաղբյուրները որպես
հայ ժողովրդի ԺԷ. – ԺԸ. դարերի պատմության աղբյուր 267

Ալբերտ տեն Կատե
Բառեր, գուշակություններ կամ պատգամներ՝ տասը պատվիրանները
հայկական ավանդության մեջ (անգլերեն) 281

Շախբան Խապիզով
Հայկական աղբյուրները Դաղստանի միջնադարյան
պատմության մասին (ռուսերեն) 289

Անի Ավետիսյան
Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուի հմր. 1751
երբայատառ արաբերեն բժշկարանների ժողովածու (անգլերեն) 310

Կոնստանտինոս Տակիրտակօղլու
Աշոտ Բ Երկաթը և բյուզանդացիները. դաշնակիցներ
մինչև վե՞րջ, թե՞ ի վերջո թշնամիներ (անգլերեն) 317

Էնդի Հիլկենս
Հակոբ Սրճեցու ճառերի հայերեն թարգմանությունները 329

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Գէորգ Տէր-Վարդանեան, Աննա Մարիա Մատար
Հայերէն ինքնատիպ մի նորայայտ տպագրութիւն 349

Հակոբ Քյոսեյան
Նորահայտ էջեր Դավիթ Քոբայրեցու մատենագրական ժառանգությունից 363

Միհրան Մինասեան
Անտիպ ժամանակագրութիւն 1821 թուականի յունական
ապստամբութեան շրջանէն 402

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հայկ Համբարձումյան
Իրանի մշակույթի օրեր Մատենադարանում 427

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 429

CONTENTS

HISTORY AND PHILOLOGY

Artak Maghalyan
From the History of Relations between the
Karabakh Khanate and the Ottoman Empire 5

Georgi Mirzabekyan
The Ottoman Tax Register of Darashamb (Year 1590) 27

Aram Topchyan
The Greco-Roman Proper Names in the Mechitarists'
Armenian Translations and the New Rules of their Transliteration 38

Gor Yeranyan
The Armenian Tradition of Calling Amid Tigranakert 52

Julietta Einatyan
Cosmography in Armenia in the 5th-13th Centuries 67

Gayane Tezyan
Grigor Marashets'i's Literary Legacy 78

Gevorg Stepanyan
Chalet' Monastery at the Crossroads of History 92

CHURCH HISTORY

Narine Vardanyan
The Armenian Canonical Collection in Literary Sources and Colophons 145

Mane Ghevondyan
The Catecheses by Mkhit'ar Sebastats'i as a Model Textbook
of Christian Education and Upbringing 158

MUSICOLOGY

Astghik Musheghyan
Armenian Sacred Taghs Recorded by Komitas 171

INTERNATIONAL CONFERENCE ON ARMENOLOGICAL AND ORIENTAL STUDIES DEDICATED TO THE 100TH ANNIVERSARY OF PROF. HAKOB PAPAZIAN

Vahan Ter-Ghevondyan
Opening Speech 195

Hasmik Kirakosyan
On an Armeno-Persian Document Published in "Azdarar" 198

Kristine Kostikyan
The Documents of Khoja Hovhannes, an 18th Century Armenian Merchant of Agulis, in the Archive of the Catholicosate of Matenadaran 211

Arsen Harutyunyan
The Evidences of Famine in the Armenian Literary Sources of the Early 17th Century 224

Anahit Tovmasyan
Tughra as a Symbol of the Sovereignty of the Ottoman Sultans 234

Anna Onanyan
The Iconography of Chalice Covers Donated to the Monastery of St. Karapet in Mush 247

Jilbert Meshkanbarians
Safavid Iranian Sources on Armenia of the 17th – 18th Centuries 267

Albert ten Kate
Words, Oracles or Commandments – the Decalogue in the Armenian Tradition 281

Shakhban Khapizov
Armenian Sources on the Medieval History of Dagestan (in Russian) 289

Ani Avetisyan
MS M1751 Judaeo-Arabic Medical Miscellany of the Matenadaran Collection 310

Konstantinos Takirtakoglou
Ashot II Yerkat and the Byzantines: Allies to the End or Ultimately Enemies? 317

Andy Hilkens
The Armenian Reception of the Homilies of Jacob of Serugh 329

PUBLICATIONS

Gevorg Ter-Vardanyan, Anna Maria Mattaar
A Newly Discovered Old Armenian Printing 349

Hakob Keosean
Pages nouvellement découvertes de l'héritage littéraire de David Kobayrétsi 363

Mihran Minassian
Unpublished Chronicle of the Greek Uprising of 1821 402

REPORT

Hayk Hambardzumyan
The Days of Iranian Culture at Matenadaran 427

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ФИЛОЛОГИЯ

Артак Магалян
Из истории отношений Карабахского ханства
с Османской империей 5

Георгий Мирзабекян
Османский налоговый реестр Дарашамба 1590 г. 27

Арам Топчян
Греко-римские собственные имена в армянских переводах Мхитаристов
и новые принципы их транслитерации 38

Гор Еранян
Об армянской традиция называть Амид Тигранакертом 52

Джульетта Эйнатян
Знания о вселенной в Армении с V по XIII века 67

Гаяне Терзян
Литературное наследие Григора Марашеци 78

Геворг Степанян
Чалетский монастырь на перекрестках истории 92

ИСТОРИЯ ЦЕРКВИ

Нарине Варданян
Армянский канонический сборник в литературных
источниках и памятных записях 145

Мане Гевондян
Катехизисы Мхитара Себастаци, как модель христианского
образования и воспитания 158

МУЗЫКОВЕДЕНИЕ

Астхик Мушегян
Армянские духовные таги, записанные Комитасом 171

МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ АРМЕНИСТОВ И ВОСТОКОВЕДОВ, ПОСВЯЩЕННАЯ 100-ЛЕТНЕМУ ЮБИЛЕЮ АКОПА ПАПАЗЯНА

Ваан Тер-Гевондян
Вступительна речь 195

Асмик Киракосян
Об одном персидском арменографическом документе, напечатанном в журнале “Аздарар” 198

Кристине Костикян
Документы агулисского купца 18-го века ходжи Ованеса в архиве католикосата в Матенадаране 211

Арсен Арутюнян
Свидетельства о голоде в армянской источниках начала XVII века 224

Анаит Товмасян
Тугра как символ суверенитета османских султанов 234

Анна Онанян
Иконография покровов потиров, дарованных монастырю Сурб Карапет в Муше 247

Жильберт Мешканбарианс
Иранские Сефевидские источники об Армении XVII-XVIII веков 267

Альберт тен Кате
Слова, пророчества или заповеди – Декалог в армянской традиции 281

Шахбан Хапизов
Армянские источники по средневековой истории Дагестана 289

Ани Аветисян
Рукопись М 1751 арабской коллекции Матенадарана 310

Константинос Такиртакоглу
Ашот II Еркат и Византия: союзники до конца или в конечном счете враги? 317

Энди Хилькенс
Армянские переводы речей Иакова Серугского

ПУБЛИКАЦИИ

Геворг Тер-Варданян, Анна Мария Маттаар
Новонайденное старопечатное армянское издание 349

Акоп Кесеян
Новонайденные страницылитературного
наследия Давида Кобайреци 363

Миран Минасян
Неопубликованная хроника периода греческого восстания 1821 года 402

СООБЩЕНИЕ

Айк Амбарцумян
Дни иранской культуры в Матенадаране 427

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
Հատոր **32**

BULLETIN OF MATENADARAN
Volume **32**

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
Том **32**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանզադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմաճեանի
Շապիկին՝ Մատենադարանում պահվող Իրանի ղաջարական շրջանի խեժապատ կազմի դրվագ՝ Ջիրավի ճակատամարտի տեսարանով (ՄՄ, ձեռ. ի^{մր}. 6203, 19-րդ. դ.)
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

27,5 մամուլ
Չափ՝ 70×100 1/16: Տպաքանակ՝ 200

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
Հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com